ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 17.04.2018թ.
ժամը 11^{00}

Մասնակիցներում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան,

Գնահատողներ՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԵՊ, ԿԱՊ-ի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Զադոյան,
- ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Խ. Երիցյան,
- ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան,
- ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին **«Էրոդավ», «ԷԼՄԱՐԿԵՏ», «Վարբադ», «Տոպազ-95», «Վարմէքս», «Միկրորինգ» և «Էյչ գրուպ» ՍՊԸ-ների** համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, իսկ **«Մաժէվ» ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չի ներկայացվել, **«Յուտեկ», «Հենրի Ռադիո», «Ավտոֆան Էյ Սի», «Էլիպս Ջի Էյ», «ԳՐԻՄԱՆ» և «ԷԼԿՈՄՊ»** ՍՊԸ-ների կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«Յուտեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում՝

- 41-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ներկայացված է թերի (կիսատ է):
- 62-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված չեն՝ ապրանքի մոդելը և ծագման երկիրը:

«Հենրի Ռադիո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում՝

- 37-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ներկայացված է թերի՝ մասնավորապես ուժեղարարի անվանումը նշված չէ:
- 52-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված չէ արտադրողի կողմից հավաստիացված ձևի (MAF) մասին տեղեկությունը:

«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում՝

- 58-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ներկայացված է թերի՝ մասնավորապես լարային զույգի քանակը սխալ է նշված:

«Էլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում՝

- 18-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում ապրանքը ներկայացված է կամ համարժեք անհրաժեշտ է հստակեցնել:

«ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում՝

- 17-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված չեն.

1. Կոմպենսացիայի ջերմաստիճանային ցուցիչը - թվային
2. Ազդանշանի վերամշակում – միկրոպրեցեսորային:

«ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում՝

- 63-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում մեգապիքսել, 1/3 փոխարեն նշված է 1/27:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացառությամբ **«Յուտեկ» և «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ**-ների, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն ժամկետանց հարկային պարտավորություններ համապատասխանաբար 3159 և 12936 ՀՀ դրամի չափով, իսկ **«Վարմէքս» ՍՊԸ**-ի պարտավորությունները՝ հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում, գերազանցում են ակտիվների հաշվապահական հավելշռային արժեքը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը (այսուհետև Կարգ)՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

25.04.2018թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

Սահմանված ժամկետում **«Յուտեկ», «Ավտոֆան Էյ Սի», «Էլիպս Ջի Էյ», «ԳՐԻՄԱՆ» և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ**-ների կողմից ներկայացվեց շտկված տարբերակները, որոնք ընդունվեցին գնահատող հանձնաժողովի կողմից: **«Հենրի Ռադիո» ՍՊԸ**-ի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանության շտկում չի ներկայացվել, **20.04.2018թ**-ին վերջինիս կողմից ներկայացվել է գրություն բացատրագիր կապված շտկումը չներկայացնելու հետ, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի ընդունվել: **«Վարմէքս» ՍՊԸ**-ի կողմից ներկայացվել է ՊԵԿ-ի կողմից հաստատված հաշվետվությունը, որը ընդունվել է գնահատող հանձնաժողովի կողմից: Քննարկելով **«Յուտեկ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված ՊԵԿ-ի տրամադրած գրությունը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացության համաձայն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ և որը գերազանցում է մասնակցի գնային առաջարկի մեկ տոկոսը 5, 49 և 54-րդ չափաբաժինների մասով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել 5, 49 և 54-րդ չափաբաժինների մասով **«Յուտեկ» ՍՊԸ**-ի հայտը սակայն վերջինիս տվյալները չուղարկել լիազորված մարմին:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ մասի պահանջները որոշեց մերժել **«Մաժէվ» ՍՊԸ**-ի հայտը, քանի որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասը որոշեց մերժել **«Հենրի Ռադիո» ՍՊԸ**-ի հայտը 37-րդ և 52-րդ չափաբաժինների մասով, քանի որ սահմանված կարգով և ժամկետներում վերջինիս կողմից չի ներկայացվել անհամապատասխանության շտկումները:

Միաժամանակ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժած չափաբաինների մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանանչել՝ 5, 10 և 54 –րդ չափաբաժիններում **«Էրոդավ» ՍՊԸ**-ին, 49-րդ չափաբաժնում **«Տոպագ-95» ՍՊԸ**-ին, 6, 53 և 55-րդ չափաբաժիններում **«Հենրի Ռադիո» ՍՊԸ**-ին, 7-րդ չափաբաժնում **«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ** -ին, 8-րդ չափաբաժնում **«Էյչ գրուպ» ՍՊԸ**-ին, իսկ 37-րդ և 52-րդ չափաբաժիններում **«Յուտեկ» ՍՊԸ**–ին:

Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու **«ՀՀ ՊՆ ՆՏԱՌ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Մերժված 10-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղ զբզղեցնող էր **«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ**-ն, որ սակայն ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացության համաձայն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ և որը գերազանցում է մասնակցի գնային առաջարկի մեկ տոկոսը 10-րդ չափաբաժնի մասով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել 10-րդ չափաբաժնի մասով վերջինիս հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա.Բաղրամյան)

2.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3»** ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել՝ ըստ տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող, (ԳԱՊ)		Տ. Մաթևոսյան
Գնահատող,		Ռ. Զադոյան
Գնահատող		Խ. Երիցյան
Գնահատող		Հ. Բարսեղյան
Գնահատող		Ա. Մաղաքյան
Գնումները համակարգող՝		Ա. Բաղրամյան